

կը ճամբորդէ Սիւրբիա և հուսկ ուրեմն, կը վախճանի իր գերուած համազգիներուն մօտ, և ըստ Սերէոսի, մարմինը կը փոխադրուի Հայաստան եւ կ'ամփոփուի իր հայրերուն գերեզմանին մէջ: Ռշտունեաց տիրոջ Թէոդորոսի վերաբերեալ այս պատմական հակիրճ տողերուն տեղեկանալէ յետոյ, Ռշտունիներէն ո՞վ էր որ կարենար իր ոյժին և ազգեցութեան ապաւինելով՝ բիզանդական կամ արաբական շրջանին Ս. Քաղաքին մէջ, յաջողիլ կառուցանելու Ռշտունեաց վանքը, անոր սեպհական ուրկանոցովը. պատմական ապացոյց չունինք. միայն ներհայեցողութեամբ (intuition) կը համարձակինք ըսել թէ հաւանաբար Թէոդորոս Ռշտունին է որ սիւրիական իր առաջին այցելութեան՝ ուխտի գալով Երուսաղէմ՝ շինել տուած է նոյն վանքը ի յիշատակ Ռշտունեաց նախարարութեան, անտարակոյս հետեւելով միւս նախարարութեանց՝ որ յիշատակներ ունէին Ս. Երկիրն մէջ:

3. Ո՞ւր շինուած էր այս վանքը.

Այս վանքը շինուած էր մեր Ս. Հրեշտակապետ վանքին հանդիպակաց կողմը, համաձայն աւանդութեան և ա՛յն կցկտուր տեղեկութեանց զոր կը յիշեն սազրմական վերջին դարու հայ պատմիչները: Նոյն վանքին բուն տեղը ճշգորէն որոշելու համար, մեր այս տողերը պէտք է հիմնուին պատմական յիշատակարանաց վրայ: 808 ին, Մեծն Կարողոսի վիճակագիր պաշտօնեան, ինչպէս յիշած ենք այլուր, Սիոնի թաղամասին վանորէից և վանականաց վիճակագրութիւնը պատրաստելու համար, Գեթսեմանիէն սկսելով՝ զրի կ'աւուու վանականներն ու վանքերը, և յառաջանալով կը հասնի Սիոնի Հայոց Ս. Ստեփանոսի վանքը, և կ'արձանագրէ հետեւեալը. «Ի Ս. Ստեփանոս, ուր կար անոր գերեզմանը, կը գտնուին երկու քահանայ և 15 բորոտներ» (Տե՛ս «Commemoratorium Casis Dei»): Չենք անդրադառնար Հայոց Ս. Ստեփանոսի վանքի պատմական մասին՝ չկրկնելու համար մեր նախապէս գրածը: Բայց ինչո՞ւ վիճակագիրը Ս. Ստեփանոսի վանքին քահանայից թուարկման կը միացնէ բորոտներուն թուարկումը, մինչ ի պատմութենէ զիտենք թէ ուրկանոցը Ս. Ստեփանոսի վանքին մէջ չէր. բայց անտարակոյս մօտն էր անոր, և կրնանք մտածել թէ Հայոց վա-